

## **ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցել է Կամսարի անհատական աշխատանքների ցուցահանդեսի պաշտոնական բացմանը**

13.09.2013



2013 թվականի սեպտեմբերի 13-ի Երևանի պատմության թանգարանում պաշտոնապես բացվեց գեղանկարիչ, Եղեգնաձորի երկրագիտական թանգարանի տնօրեն Կամո Սահակյանի (Կամսարի) աշխատանքների անհատական ցուցահանդեսը: Ցուցահանդեսի պաշտոնական բացմանը ներկա էր նաև և ողջուն խոսքով հանդես եկավ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը: Միջոցառմանը ներկա էին նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելսիկ Հարությունյանը, ՀՀ վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետ Արփիար Ղազարյանը, նույն վարչության գլխավոր մասնագետ Աղասի Հովհաննիսյանը, արվեստագետներ, հյուրեր, բազմաթիվ եղեգնաձորցիներ: